Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N **23.6/[44063]-10**

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-ԻՆ ԺԱՄԸ 17:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

---

**քաղ. Երևան**
**Մասնակցում էին՝**

***Խորհրդի անդամներ՝***

| | |
|---|---|
| Ա. Գևորգյան | ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար |
| Ն. Երիցյան | ՀՀ էկոնոմիկայի նախարար |
| Մ. Վարդանյան | ՀՀ տրանսպորտի և կապի նախարար |
| Գ. Դանիելյան | ՀՀ արդարադատության նախարար |
| Ե. Զախարյան | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ |

***Հրավիրվածներ՝***

| | |
|---|---|
| Վ. Խուրշուդյան | ՀՀ ԱԺ-ի պատգամավոր |
| Հ. Նաղդալյան | ՀՀ ԱԺ-ի պատգամավոր |
| Ա. Աղաջանյան | ՀՀ ԱԺ-ի պատգամավոր |
| Ա. Մարտիրոսյան | ՀՀ ԱԺ-ի պատգամավոր |
| Դ. Սարգսյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար |
| Վ. Արամյան | ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ |
| Հ. Մկրտչյան | ՀՀ վարչապետի օգնական |
| Լ. Հունանյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ |
| Ռ. Վարդանյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ |

| | |
|---|---|
| Ռ. Եգանյան | ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ |
| Ֆ. Փիրումյան | «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն |
| Է. Ավետյան | ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոնե պետական հիմնարկի տնօրեն |

1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Աշտարակ-Գյումրի ճանապարհահատվածի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումե փաստաթուղթը Ասիական զարգացման բանկի և ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության ինտերնետային կայքերում հրապարակելու մասին

---

(Ֆ. Փիրումյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանին՝ իր իսկ առաջարկությանը համապատասխան վերանայել և ըստ այդմ խմբագրել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Աշտարակ-Գյումրի ճանապարհահատվածի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումե փաստաթուղթը.

2) հավանություն տալ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Աշտարակ-Գյումրի ճանապարհահատվածի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումե փաստաթղթի խմբագրված տարբերակին.

3) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանին՝ 120 օրվա ընթացքում համապատասխան առաջարկություններ ու դիտողություններ ստանալու ակնկալիքով Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Աշտարակ-Գյումրի ճանապարհահատվածի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումե փաստաթղթի խմբագրված տարբերակը տեղադրել Ասիական զարգացման բանկի և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ինտերնետային կայք-էջերում։

2. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի օտարվող հողի և գույքի ճշգրտման և գնահատման խորհրդատուի ընտրության մրցույթի արդյունքների հաստատում

---

(Ֆ. Փիրումյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց** հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանին՝

1) 3-օրյա ժամկետում Ասիական զարգացման բանկի հետ շարունակել և ավարտին հասցնել բանակցությունների գործընթացը.

2) բանակցային գործընթացի դրական արդյունքների պարագայում գրավոր հարցման եղանակով օտարվող հողի և գույքի ճշգրտման և գնահատման խորհրդատվական ընկերության ընտրության «կարճ ցուցակե-ը ներկայացնել կառավարման խորհրդի անդամների հաստատմանը, իսկ հակառակ պարագայում՝ չեղյալ համարել մրցույթի արդյունքները։

**3.** «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի 2010 թվականի պահպանման ծախսերի նախահաշվի հաստատում

---

(Ֆ. Փիրումյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց** հաստատել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի 2010 թվականի պահպանման ծախսերի նախահաշիվը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ (ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ) ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ